ԱԳՐՈ Լրատու

ՄԱՐՏ 25 - ԱՊՐԻԼ 5 2016 Թ. ԹԻՎ 7 (2095)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Պատշաճ վերահսկողության իրականացում

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն այցելել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» («ՀԱԲԼԾԿ») ՊՈԱԿ:

Շրջայցի ընթացքում վարչապետը ծանոթացել է կենտրոնի գործունեության ուղղություններին, աշխատանքային պայմաններին, իրականացվող բարեփոխումներին և տեխնիկական վերազինման շարունակական գործընթացին: Կենտրոնի տնօրեն Արման Գևորգյանը նշել է, որ 2015-2016 թթ. կենտրոնը համալրվել է գերճշգրիտ սարքավորումներով և աշխատանքային միջոցներով: Նրա խոսքով՝ սարքավորումները Հայաստանում, որոշ դեպքերում՝ նաև տարածաշրջանում եզակի են, ինչը նպաստում է մթերքի և հումքի նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացմանը՝ ինչպես Եվրասիական տնտեսական միության, այնպես էլ՝ Եվրոպական Միության նորմատիվ պահանջներին համապատասխան:

Նշենք, որ ՀՀ և ՌԴ միջև 2015 թ. մայիսի 21-ին ստորագրված համաձայնագրի շրջանակում, «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի Սննդամթերքի անվտանգության հետազոտությունների լաբորատորիան հագեցվել է 184 մլն 808 հազար ռուբլի արժողությամբ մի շարք նորագույն հետազոտական համակարգերով՝ ալկոհոլային արտադրանքում, կաթի, հյութերի որակի որոշման և կեղծիքների բացահայտման համար օգտագործվող իզոտոպային եզակի համակարգով, ինչպես նաև ժամանակակից այլ սարքավորումներով: Համաձայնագրով նախատեսված աշխատանքները կավարտվեն 2018 թվականին՝ համալրելով «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ի կենտրոնական կառույցը և ընդգրկելով նաև որոշ մարզային կենտրոններ:

2

Նախապատվությունը տրվելու է կոոպերատիվներին

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այց է կատարել Արագածոտնի մարզ, որտեղ խորհրդակցություն է անցկացրել գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացիկ խնդիրներն ու առաջիկա անելիքները քննարկելու նպատակով:

Խորհրդակցությանը մասնակցում էին Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանը, , Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արամ Հարությունյանը, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրեն Գագիկ Խաչատրյանը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտուն Մաթևոսյանը, պատգամավորները, համայնքապետեր և ֆերմերներ: «Արագածոտնի մարզում գյուղատնտեսության ոլորտը վերջին շրջանում զգալի առաջընթաց է ունեցել: Մարզի մասնաբաժինն անցած տարվա գյուղատնտեսական արտադրանքի համախառն արդյունքի մեջ կազմել է մոտավորապես 10 տոկոս, ինչը բավականին բարձր ցուցանիշ է: Ընդ որում, հաջողություններ են գրանցվել ոլորտի բոլոր ճյուղերում, հատկապես հացահատիկային մշակաբույսերի արտադրության, պտղաբուծության և խաղողագործության, ինչպես նաև՝ անասնապահության բնագավառում»,- նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

2015 թվականին, նախորդ տարվա նկատմամբ, մարզում 2711 հեկտարով ավելացել են մշակովի հողատեսքերը, հավելյալ 1143 հեկտար աշնանացան է կատարվել, բարձրացել է բերքատվությունը, որն այժմ կազմում է 32,6 g/ha: Անդրադառնալով «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում՝ Արագածոտնում կատարված աշխատանքներին՝ նախարարը տեղեկացրել է, որ ՀԳՌԿՄ 1-ին ծրագրում ընդգրկված 12 համայնքներում ստեղծվել են կոոպերատիվներ, անցկացվել է 45 կմ ջրագիծ, տեղադրվել է 38 խմոց, տրամադրվել է 127 միավոր գյուղտեխնիկա, որից 24-ը՝ տրակտոր:

Ընդգծելով կոոպերատիվների դերն ու նշանակությունը՝ նախարարը տեղեկացրել է, որ 2015 թվականի վերջին ընդունվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը, որով իրավական հիմքեր են ստեղծվել երկրում կոոպերացիայի զարգացման համար:

2

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Կառավարության որոշմամբ, ներդրումային ծրագրի շրջանակում, «Որոտան Սիսթեմս» ՍՊԸ կողմից ապրանքների ներմուծման դեպքում, մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը կհետաձգվի երեք տարով: Ըստ հիմնավորման՝ ներդրումային ծրագրի շրջանակում «Որոտան Սիսթեմս»-ը նախատեսում է ՀՀ Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղում կառուցել փոքր հիդրոէներգակասկադ, արտադրել էլեկտրաէներգիա՝ օգտագործելով նշված տարածքի գետերի պոտենցիալը: Դրա համար ընկերությունը նախատեսում է ներդրումներ իրականացնել շուրջ 3.31 մլրդ ՀՀ դրամի չափով, որից մոտ 120.5 մլն ՀՀ դրամը՝ սարքավորումներ ձեռք բերելու համար: Ներդրումային ծրագրի իրագործման արդյունքում կստեղծվի մոտ 40 աշխատատեղ:

***

Գործադիրի որոշմամբ, «Սևան Ակվա» ՓԲԸ կողմից գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը կազատվեն ներմուծման մաքսատուրքից: Մեկ այլ որոշմամբ էլ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում ,մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը կհետաձգվի երեք տարով:

«Սևան Ակվա»-ն հանդիսանում է Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրով նախատեսված օղակներից մեկը, որն իրականացնում է ապրանքային ձկան աճեցում Սևանա լճում տեղակայվող տնտեսություններում: Ընկերությունը նախատեսում է հիմնել և Սևանա լճում տեղակայել մոդելային ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսություն, որտեղ առաջիկա 10 տարվա ընթացքում, կաճեցվեն Սևանի իշխանի գեղարքունի և ամառային ենթատեսակներ: 2016թ. Սևանա լճում կտեղակայվի մեկ ձկնաբուծական տնտեսություն, որը բաղկացած կլինի 12 ցանցավանդակներից: Ընդհանուր առմամբ Սևանա լճում տեղակայված մեկ ձկնաբուծական տնտեսությունը նախատեսում է իր արտադրական հզորություններին հասնել 3 տարվա ընթացքում, որի արդյունքում կարող է արտադրել տարեկան շուրջ 685 տոննա ձկնամթերք, որի հասույթը կկազմի շուրջ 2 մլրդ 400 մլն ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման արդյունքում տեղական սպառողները հնարավորություն կունենան մշտապես սպառելու բարձրորակ և համեմատաբար մատչելի գներով ձկնամթերք, կավելանա ՀՀ-ից արտահանումների ծավալը, կստեղծվեն նոր աշխատատեղեր: Ներդրումային ծրագրի իրագործման արդյունքում կստեղծվի մոտ 155 աշխատատեղ:

***

Կառավարության մեկ այլ որոշմամբ, գումար կհատկացվի՝ Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամին՝ կանոնադրական նպատակների իրականացման նպատակով անհատույց տրամադրելու համար՝ Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի իրականացման անհրաժեշտությամբ: Ծրագրով նախատեսվում է Սևանա լճի ավազանում ստեղծել Սևանի իշխանի մանրաձկան արտադրության գործարան, ձկան վերամշակման գործարան և լճում տեղակայվող տնտեսություններ:

Կոոպերացիա Էջ 4

Մասնագետի խորհուրդը Էջ 6

Դիմանկար Էջ 7

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅԺ

Պատշաճ վերահսկողության իրականացում

1

Հովիկ Աբրահամյանը շրջել է նաև Բուսասանիտարական հետազոտությունների լաբորատորիայի հսկիչ-թունաբանական բաժնում, որը կառուցվել և համալրվել է ժամանակակից սարքավորումներով Հունաստանի կառավարության և ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության համատեղ ծրագրի շրջանակում: Նշվել է, որ այն Հայաստանում առաջին և հագեցվածությամբ միակ լաբորատորիան է, որը թույլ է տալիս միջազգային մեթոդներին համապատասխան իրականացնել բույսերի պաշտպանության միջոցների ազդող նյութերի փորձաքննություններ:

Վարչապետը կարևորել է կենտրոնի վերազինումը՝ ընդգծելով, որ կատարված մեծ աշխատանքը կնպաստի անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում փորձաքննությունների արագ և արդյունավետ իրականացմանը, ինչը մեծ կարևորություն ունի բիզնեսի անխաթար գործունեության համար: Ըստ Հ. Աբրահամյանի՝ գլխավոր նպատակն է, որ մեր երկիր միայն միջազգային չափորոշիչներին համապատասխան սննդամթերք մտնի: Դա գերակա խնդիր է, և ձեռնամուխ են լինելու, որպեսզի բոլոր վերահսկողական ֆունկցիաներն իրականացվեն ժամանակին և արդյունավետ, բայց և չխաթարվի բիզնեսի գործունեությունը:

«Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ն ստեղծվել է 2011 թ. և Հայաստանի ողջ տարածքում գործունեություն է ծավալում երեք հիմնական ուղղությամբ՝ սննդամթերքի անվտանգություն, բուսասանիտարիա և անասնաբուժություն: 2015 թ. լաբորատորիան իրականացրել է շուրջ 1 մլն 100 հազար փորձաքննություն:

www.gov.am

Նախապատվությունը տրվելու է կոոպերատիվներին

1

Նախարարն ընդգծել է, որ Հայաստանում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը խթանելու նպատակով, պետական օժանդակության ծրագրերն իրականացնելիս, այսուհետ նախապատվությունը տրվելու է կոոպերատիվներին: Մասնավորապես, «ՀԳՌԿՄ 2» ծրագրի միջոցներով ընդամենը 20 տոկոս համաֆինանսավորմամբ, կոոպերատիվներին տրամադրվում է անհրաժեշտ գյուղտեխնիկա, ստեղծվելու են փոքր վերամշակվող արտադրամասեր, ինչը թույլ կտա կոոպերատիվների անդամներին շոշափելիորեն ավելացել իրենց եկամուտները: Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Արամ Հարությունյանն, իր հերթին, նշել է, որ 2015 թվականին ոռոգման ոլորտում առաջացել են մի շարք խնդիրներ, որոնք հաջողվել է հաղթահարել: Նա նաև հույս է հայտնել, որ ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես կհաջողվի մարզում ապահովել ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի պաշարները: Տեղեկացնելով, որ մարզում գործում են 6 ջրօգտագործողների ընկերություններ՝ կոմիտեի նախագահը շեշտել է, որ ՋՕԸ-երի ղեկավարները մշտապես մեծ պատասխանատվությամբ են վերաբերվել իրենց գործառույթներին:

Խորհրդակցության ավարտին Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար, ՀՀ գյուղատնտեսության նախարարի ոսկե մեդալով են պարգևատրվել Վաղինակ Իսրայելյանը և Հունան Սարգսյանը, իսկ մի խումբ գյուղացիական տնտեսություններ և ագրովերամշակման ոլորտի ներկայացուցիչներ արժանացել են շնորհակալագրերի: Այնուհետև նախարարն ուղևորվել է Նոր Ամանոս համայնք՝ ՀԳՌԿՄ 2-րդ ծրագրի շրջանակում, նոր ստեղծված սպառողական կոոպերատիվի գործունեությանը տեղում ծանոթանալու նպատակով:

Նախարարը նշել է, որ ներկայումս պետությունը միջոցներ է ձեռնարկում գյուղատնտեսների միավորման և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը խթանելու ուղղությամբ: Նախարարը նաև հավելել է, որ կոոպերատիվների ձևավորման գործում որպես հիմք ընդունվում է եվրոպական երկրների, մասնավորապես՝ Ֆրանսիայի հարուստ փորձը: Նոր Ամանոս համայնքի ղեկավար Վահրամ Բաղդասարյանը նշել է, որ կոոպերատիվի հիմնումը համայնքի գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետ կառավարման առավել նպատակահարմար ճանապարհն էր: Կոոպերատիվն այժմ ունի 67 անդամ, շուտով կհամալրվի նաև նոր անդամներով: Համայնքն անասնապահական ուղղվածություն ունի, և ՀԳՌԿՄ ծրագիրը, համայնքապետի հավաստմամբ, զգալի դրական ազդեցություն կարող է ունենալ մի շարք խնդիրների լուծման համար:

Վահրամ Բաղդասարյանը նաև հավելել է, որ գյուղի բնակիչներին հուզող հիմնական հարցն այս պահին ոռոգման խնդիրն է, որը, նախարարի միջամտությամբ, դրական լուծում կստանա: Նախարարի վերջին կանգառը Վերին Սասնաշեն համայնքում էր: Տեղի կոոպերատիվն այստեղ ստեղծվել է դեռևս 2014 թվականի ապրիլին, և արդեն դրական արդյունքները նկատելի են: Երկու տարվա գործունեության ընթացքում, ՀԳՌԿՄ ծրագրի շրջանակում, կոոպերատիվին տրամադրվել է 5 միավոր գյուղտեխնիկա, ջրարբիացվել են ավելի քան 5 կմ արոտներ, ավելացել է անասնագլխաքանակը և կաթնատվությունը:

Կոոպերատիվի անդամները, նախարարի հետ հանդիպման ընթացքում, գոհունակություն հայտնեցին կոոպերատիվի գործունեությունից, բարձրացրեցին նաև ընթացիկ խնդիրներ՝ մատնանշելով մասնավորապես ոռոգման, ինչպես նաև կաթի և մսի իրացման հարցերը:

Գյուղատնտեսական աշխատանքներին ընդառաջ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այցով մեկնել է Վայոց ձոր: Մարզկենտրոնում նախարարն անցկացրել է խորհրդակցություն՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկին ընդառաջ ընթացիկ խնդիրների քննարկման նպատակով: Խորհրդակցությանը մասնակցում էին Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, մարզպետարանի աշխատակազմի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության տարածքային ստորաբաժանումների տնօրեններ, ՋՕԸ-ների ղեկավարներ, համայնքապետեր և գյուղատնտեսներ:

«Վայոց ձորի ագրարային ոլորտներում դեռևս առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ հողի մշակման առումով մարզի ցուցանիշները ցածր են: Հետևողական աշխատանքի արդյունքում նախորդ տարի հնարավոր դարձավ մշակվող ցանքատարածություններն ավելացնել 1020 հեկտարով, սակայն դեռևս վարելահողերի ընդամենը 36 տոկոսն է օգտագործվում, հարկավոր է քայլեր ձեռնարկել այս ցուցանիշն ավելացնելու ուղղությամբ», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Ամփոփելով մարզում բուսաբուծության ոլորտի նախորդ տարվա արդյունքները՝ նախարարը տեղեկացրել է, որ 2015 թվականին բավականին ցածր է եղել հացահատիկային մշակաբույսերի՝ գարու, ցորենի բերքատվությունը: Նախարարի խոսքով՝ սերմնաբուծության զարգացման պետական ծրագրի շնորհիվ, վերջին տարիներին հնարավոր է եղել հանրապետության ցորենի սերմի պահանջարկը բավարարել շուրջ 85 տոկոսի չափով՝ ներքին ռեսուրսների հաշվին, իսկ սորտաթարմացման շնորհիվ հաջողվել է էականորեն ավելացնել բերքատվությունը: Եթե 2010 թվականին ցորենի բերքատվությունը կազմում էր ընդամենը 22,5 g/հա, ապա արդեն 2015 թվականին այն հասավ 34 g/հա-ի:

Շեշտելով, որ փոքրամասշտաբ գյուղացիական տնտեսությունները չեն կարող այնպիսի որակյալ որակյալ արտադրանք ստեղծել, որը կնպաստի երկրում արդյունաբերական գյուղատնտեսության զարգացմանը, այս համատեքստում նախարարն ընդգծել է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման անհրաժեշտությունը:

Նախարարի խոսքով՝ այս խնդրի լուծմանն են ուղղված միջազգային կառույցների հետ իրականացվող մի շարք համատեղ ծրագրեր, այդ թվում՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (CARMAC 2) և «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման» (ENPARD) ծրագրերը, որոնցում ընդգրկված է նաև Վայոց ձորի մարզը: CARMAC 2 ծրագրով Վայոց ձորից ընդգրկվել են 10 համայնք, որի շրջանակում այստեղ հիմնվել է 5 կոոպերատիվ: Նախարարն ընդգծել է, որ գյուղացիական տնտեսությունների միավորումն ու ակտիվ համագործակցությունը կոոպերատիվի կազմում ավելի լայն հնարավորություններ կստեղծի աշխատանքի արդյունավետության բարձրացման և դրանով իսկ ֆերմերների եկամուտների ավելացման համար: Խորհրդակցության ընթացքում անդրադարձ է կատարվել նաև մթերումների կազմակերպման հարցին: Նախարարը կարևորել է 2015 թվականին Եղեգնաձորի պահածոների գործարանի վերագործարկումը, որը բավանաչափ մթերումներ է իրականացրել: Նախարար Կարապետյանը նշել է, որ թեև 2015-ին խնդիրներ եղան, մասնավորապես՝ խաղողի մթերումների հետ կապված, սակայն վերամշակող ընկերությունները բոլոր միջոցները ձեռնարկեցին մթերումները կազմակերպելու համար: Արդյունքում՝ առաջին անգամ հանրապետությունում մթերման ծավալները, նախորդ տարվա համեմատությամբ, մոտ 30 տոկոսով ավելացան: Տեղեկացնելով, որ ընդհանուր առմամբ հանրապետությունում կատարվել է 39 մլրդ դրամի մթերում, որի դիմաց վճարումները կատարվել են շուրջ 96 տոկոսով՝ նախարարը հույս է հայտնել, որ մթերման դիմաց կուտակված պարտքերն արագ կվճարվեն: Իր հերթին Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը նշել է, որ ընթացիկ տարին նպաստավոր է գյուղատնտեսական աշխատանքների իրականացման առումով, և մարզպետարանն ամեն կերպ պատրաստ է աջակցել մարզի գյուղատնտեսներին՝գարնանացանն արդյունավետ կազմակերպելու գործում: Նա նաև հավելել է, որ միջոցներ են ձեռնարկվում այս տարի մարզի ցանքատարածությունները ևս մոտ 1000 հեկտարով ավելացնելու ուղղությամբ: Խորհրդակցության ավարտին գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարի ոսկե մեդալով են պարգևատրվել Խնձորուտ համայնքի ֆերմեր Սևադա Հմայակյանը և Եղեգնաձորի պահածոների գործարանի սեփականատեր Սարգիս Պողոսյանը, իսկ մի խումբ գյուղացիական տնտեսությունների և ագրովերամշակման ոլորտի ներկայացուցիչներ արժանացել են շնորհակալագրերի:

Այնուհետև նախարարն ուղևորվել է Եղեգնաձորի՝ պանրի արտադրությամբ զբաղվող «Գոլդեն գոուտ» ընկերություն: Տնօրեն Խաչիկ Մարտիրոսյանի տեղեկացմամբ, կազմակերպությունը կաթ է մթերում մարզի 11 համայնքների շուրջ 140 ֆերմերներից, մեկ լիտրը՝ 150 դրամով: Ֆերմերային տնտեսություններից մթերված կաթի արժեքն ամբողջությամբ վճարվել է: Նա նաև նշել է, որ արտադրանքի գերակշիռ մասն արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն: Այժմ բանակցություններ են ընթանում Իրանի շուկա մտնելու համար: Ընկերությունը զբաղվում է նաև այծաբուծությամբ, ինչը տնօրենի հավաստմամբ, խիստ եկամտաբեր է հատկապես Վայոց ձորի համար, քանի որ մարզի արոտավայրերն առավել քան նպաստավոր են այդ ճյուղի զարգացման համար:

Խաչիկ Մարտիրոսյանը հավելել է, որ ի տարբերություն մյուս տեսակների՝ այծի պանիրը մշտապես մեծ պահանջարկ ունի հատկապես արտերկրում, ուստի իրացման խնդիրներ չեն լինում: Ընկերությունն արտադրում է պանրի 9 տեսակներ, որոնցից 6-ը՝ այծի կաթից, հանրապետությունում միակն է, որ ունի յուրօրինակ պանրատեսակ՝ «ձեթով պանիր»:

ԱԳՐՈ Լրատու
Մարտ 25 - ապրիլ 5, 2016 թ.
թիվ 7 (2095)

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Նախարարը կարևորել է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այց է կատարել Կոտայքի մարզ՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ընթացքին ծանոթանալու նպատակով:

Խորհրդակցությանը մասնակցել են Կոտայքի մարզպետ Կարապետ Գուլոյանը, գյուղատնտեսներ, համայնքապետեր և ոլորտի այլ պատասխանատուներ: Նախարարը մասնակցել է մարզխորհրդի նիստին, որի ընթացքում քննարկվել են մարզի գյուղատնտեսության ներկա վիճակը, առաջիկա խնդիրները և իրականացվող ծրագրերը: «Կոտայքի մարզի գյուղատնտեսության ոլորտում վերջին տարիներին գրանցվել են լուրջ ձեռքբերումներ, հունվարի 1-ի դրությամբ, ավելացել է անասնագլխաքանակը՝ խոշոր եղջերավոր կենդանիներինը՝ 1,7 տոկոսով, մանր եղջերավոր կենդանիներինը՝ մոտ 4,9 տոկոսով, խոզերինը՝ 41 տոկոսով:

Մարզն արդեն ընդգրկվել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի մեջ, այս քայլով անասնապահության զարգացումը նոր թափ կստանա»,- նշել է Ս. Կարապետյանը: Ընդգծելով, որ Կոտայքի մարզից ծրագրի մեջ ընդգրկվել են 10 համայնքներ՝ նախարարը տեղեկացրել է, որ դրանցից 8-ում արդեն ստեղծվել են արոտօգտագործողների կոոպերատիվներ: Այլ համայնքներ նույնպես ցանկություն կհայտնեն ընդգրկվել ՀԳՌԿՄ ծրագրում: Նախարարը գոհունակությամբ հավելել է, որ 2015 թ. առաջին անգամ մարզում շուրջ 1000 հեկտար ավել հող է մշակվել:

«Մարզն ունի շուրջ 37 700 հեկտար վարելահող, որից 45 տոկոսն է օգտագործվել. նախորդ տարվա տվյալներով, այս տարի ակնկալվում է, որ ցուցանիշը կհասնի 48-49 տոկոսի: Եթե աճը շարունակվի նման դինամիկ տեմպերով, մի քանի տարի հետո պատկերն ամբողջությամբ կփոխվի»:

Անդրադառնալով մարզում հացահատիկային մշակաբույսերի բերքատվությանը՝ նախարարը շեշտել է, որ այն դեռևս շատ ցածր է, և եթե միջին ցուցանիշը կազմում է 33 գ/հա, ապա Կոտայքում այն ընդամենը 26,8 գ/հա է: Նախարարը շեշտել է նաև նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ, նոր պտղատու այգիների հիմնման և ջերմոցային տնտեսությունների ընդլայնման կարևորությունը: Առաջիկայում մարզում նախատեսվում է կառուցել շուրջ 30 հեկտար ջերմոցներ:

Խորհրդակցության ավարտին ՀՀ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար, ՀՀ գյուղատնտեսության նախարարի ոսկե մեդալով են պարգևատրվել «Թամարա և Անի» ՍՊԸ արտադրության պետ Տիգրան Շալջյանը և ֆերմերային տնտեսության ղեկավար Գարեգին Սեդրակյանը, իսկ մի խումբ գյուղացիական տնտեսությունների և ագրովերամշակման ոլորտի ներկայացուցիչներ արժանացել են շնորհակալագրերի:

Նիստից հետո նախարարը մասնակցել է մարզի կոոպերատիվների նախագահների հետ ժողովին, որի ընթացքում արծարծվել են անասնաբուժական ծառայությունների իրականացման, կաթի մթերման գների, գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների կանխարգելման և մի շարք այլ հարցեր:

Կոոպերատիվների վերաբերյալ նախարարը նշել է, որ համատեղ աշխատանքը թույլ կտա թեթևացնել գյուղացիների հոգսերը, իսկ պետության կողմից կոոպերատիվներին կտրամադրվի համապատասխան օժանդակություն, մասնավորապես, կոոպերատիվներին, 20 տոկոս համաֆինանսավորմամբ, «ՀԳՌԿՄ 2» ծրագրի միջոցներով, կտրամադրվի անհրաժեշտ գյուղտեխնիկա, կստեղծվեն փոքր վերամշակվող արտադրամասեր:

Նախարարի հաջորդ կանգառը Զովունի համայնքում էր, այնտեղ 2003 թվականին հիմնադրված «Թամարա և Անի» ՍՊԸ-ում:

Ընկերության տնօրեն Արմեն Մկրտչյանի տեղեկացմամբ, սկզբնական շրջանում արտադրության ծավալները փոքր էին, տեսականին՝ սահմանափակ, սակայն, աստիճանաբար գրավելով իր ուրույն տեղը շուկայում՝ մեծացան թե՛ արտադրության ծավալները, և թե՛ թողարկվող արտադրանքի տեսականին: Տնօրենը նաև նշել է, որ ներկայումս կաթը մթերվում է 150 դրամով, իսկ ամառվա ամիսներին մթերման գինը 130 դրամից չի նվազի:

Ընկերությունում արտադրվում է կաթնամթերքի լայն տեսականի, պանիրներ, պաղպաղակ, գազավորված զովացուցիչ ըմպելիքներ և շշալցված աղբյուրի ջուր:

Գործարանը համալրված է ժամանակակից սարքավորումներով, որոնք ներկրվել են արտերկրից: Արտադրանքը նաև արտահանվում է:

ԿՐԹԱԿԱՆ

ԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՄԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վերջերս Հայաստանի ազգային ագրարային համալսարանի փոքր դահլիճում տեղի ունեցավ «Կայուն անտառկառավարումը Հայաստանում» ֆիլմի ցուցադրությունը և պլենար քննարկում «Անտառկառավարման դրական ազդեցությունը կենսաբազմազանության վրա» թեմայով:

«Կայուն անտառկառավարումը Հայաստանում» ֆիլմն անդրադառնում էր նոր մշակված անտառկառավարման տեղեկատվական համակագին, որի հիմքում տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգն է, որը կիրառվում է որպես անտառկառավարմանն ու պահպանությանն ուղղված աշխատանքների պլանավորման և մոնիտորինգի գործիք: Ինչպես ֆիլմում նշվեց, այս համակարգը Հայաստանի բոլոր անտառտնտեսությունները կապում է ոլորտի պատասխանատու մարմինների հետ ազգային մակարդակում, տրամադրում ճշգրիտ տեղեկություն և մատչելի դարձնում դրա մշակումն ու փոխանակումը: Համակարգի նպատակն է՝ ներդնել անտառների կայուն կառավարումը՝ նոր չափանիշների, տեխնիկական մեթոդների և ադմինիստրատիվ ընթացակարգերի կառավարման միջոցով:

Հանդիպման մյուս հատվածում բանախոսները՝ Հովիկ Սայադյանը (Հայաստանի ազգային ագրարային համալսարանի արտաքին կապերի դեպարտամենտի պետ), Հայկ Երվանդյանը (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառվերականգնման և անտառապատման բաժնի առաջատար մասնագետ), Ստեփան Բաբայանը (ՀՀ գյուղատնտեսության նախարարության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի բնության հատուկ պահպանվող տարածքների բաժնի առաջատար մասնագետ), Վահե Մարտիրոսյանը («Հայաստան ծառատունկ» ծրագիր (Էյ-Թի-Փի բարեգործական հիմնադրամ), անտառագետ), Ատոմ Գրիգորյանը (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ, գլխավոր մասնագետ), Գալուստ Նանյանը (էկոլոգիական հարցերով անկախ վերլուծաբան) անդրադարձան Հայաստանում անտառկառավարման ընթացիկ զարգացումներին, խոսեցին կենսաբազմազանության կորստի ու դրա հնարավոր հետևանքների մասին, քննարկեցին ոլորտային մի շարք հիմնախնդիրներ, պատասխանեցին դահլիճում հնչած հարցերին:

Նշենք, որ հանդիպումն անցկացվում էր «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ:

ԱԳՐԱՐԱՅԻՆՑԻՆԵՐԸ ԴԱՐՁԱՆ ՔԱՌԱԿԻ ՉԵՄՊԻՈՆ

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի փառը ավարտվեց ՀՀ միջբուհական 17-րդ առաջնությունը, որին մասնակցում էին առաջատար բուհերի թիմերը: Տղամարդկանց առաջնությունում արդեն չորրորդ անգամ բացարձակ հաղթողի պատվաբեր կոչումը նվաճեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի թիմը՝ առաջին կարգայիններ Արտավազդ Հայրապետյան (մագիստրատուրա 2-րդ կուրս), Հայկ Վարդանյան (մագիստրատուրա 2-րդ կուրս), Արամ Պլուզյան (ԱԷԿ-2), Գագիկ Մարտիրոսյան (ՍԳ-2) կազմով:

Թիմի մարզիչն է տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀԱԱՀ-ում գործող՝ Հայաստանի շախմատի պատմության թանգարանի հիմնադիր-տնօրեն Ռաֆայել Չատինյանը:Մրցակցությունը խիստ էր ու լարված, և մինչև վերջին տուրը հաղթողի դափնին նվաճելու լուրջ ու հիմնավորված հույսեր ունեին թե ագրարայինի, թե սլավոնական համալսարանի թիմերը: ՀԱԱՀ երիտասարդները վերջին տուրում հանդես եկան շատ համախմբված. երկրորդ հորիզոնականը նվաճած տնտեսագիտական համալսարանի թիմին գերազանցեցին երկու միավորով: Հաղթանակը համոզիչ էր, նաև՝ օրինաչափ: 2008, 2010, 2012 թվականներին համանման մրցույթներում նույնպես հաղթող են ճանաչվել: «Վահանյանի գավաթ» միջազգային մրցաշարում ՀԱԱՀ հավաքականը կիսել է 1-3 տեղերը:

Թիմը միջբուհական մրցաշարերում երեք անգամ նվաճել է նաև արծաթե, երկու անգամ՝ բրոնզե մեդալներ: Գոհացնող են նաև ուսանողների անհատական մրցապայքարի արդյունքերը. 2010-ին Վարդգես Թովմասյանը գրավել է առաջին տեղն ու արժանացել ոսկե մեդալի: 2014-ին նույն հաջողությունը կրկնել է նաև Արտավազդ Հայրապետյանը: Նա 2013-2014 թվականներին նվաճել է Երևանի չեմպիոնի կոչումը: Թիմի տղաների արդյունքերը գոհացնող էին նաև անհատական առաջնությունում, որտեղ 48 մասնակցի շարքում Հայկ Վարդանյանը երրորդն էր, Արտավազդ Հայրապետյանը՝ չորրորդը:

www.anau.am

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՓՈԽՇԱՀԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՂԻՆԵՐԸ

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնը և ՕԶՍՖԱՄ-ի հայաստանյան գրասենյակը կազմակերպել էին մասնավոր հատվածի աշխատանքային ենթախմբի հերթական հանդիպումը՝ «Վերամշակող-ֆերմեր փոխշահավետ համագործակցության քարոզչությունը» թեմայով:

Հանդիպումն իրականացվել էր «Հարավային Կովկասում տարածաշրջանային պարենային անվտանգության բարելավում ազգային ռազմավարության և մանր ֆերմերական արտադրության միջոցով» ծրագրի շրջանակներում և ֆինանսավորվել՝ ԵՄ և ՕԶՍՖԱՄ-ի կողմից: Ծրագրի իրականացման գործընկերն է «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնը:

Հանդիպման հիմնական նպատակն էր՝ քննարկել վերամշակող-ֆերմեր փոխշահավետ համագործակցության հաստատման համար իրավական և մոտիվացիոն մեխանիզմները՝ կարևորվելով նաև Գյուղատնտեսական Դաշինքի դերն այդ հարցում: Հայաստանի Գյուղատնտեսական Դաշինքի գործունեությունը ներկայացրեց կազմակերպության համակարգող Լիլիթ Քոչինյանը: «Գյուղատնտեսական Դաշինքը միավորում է 15 կազմակերպություններ, որոնք աշխատում են գյուղատնտեսության ոլորտում: Ամեն ամիս ունենում ենք քննարկումներ, որպեսզի կարողանանք լուծել առկա խնդիրները: Կազմակերպություններն ունեն իրենց ներկայացուցչությունները 200 համայնքներում և 10 հազարից ավելի շահառուներ»,- ասաց նա՝ հավելելով, որ կարևորում է նաև դաշինքի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համագործակցությունը, որը ձևավորվել է 2013թ., արդյունքում՝ ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր:

Նշենք նաև, որ ձևավորվել է նաև գյուղատնտեսության ոլորտի և Հայաստանի համայնքների զարգացման հարցերով զբաղվող աշխատանքային խումբ: Այնուհետև կայացան քննարկումներ՝ վերամշակող-ֆերմեր հարաբերություններում կիրառելի, արդյունավետ, իրավական և պայմանագրային մեխանիզմների, վերամշակողների համար մոտիվացիոն մեխանիզմների վերաբերյալ: Հանդիպման արդյունքում ընտրվեց արդյունավետ մոդել, որը կօգտագործվի որպես աշխատանքային ուղեցույց՝ հետագա լոբբինգի և քարոզչության համար:

Մասնավոր հատվածի աշխատանքային ենթախմբի հանդիպմանը մասնակցում էին սննդի վերամշակման ոլորտի կազմակերպություններ, գյուղատնտեսական կոոպերատիվների, տեղական, ազգային և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Վերջում կայացավ քննարկման ամփոփում:

Նելլի Սահակյան

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՎԱՐԿԵՐ՝ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տարիների փորձ և հարուստ ավանդույթներ ունեցող ագրոբիզնեսի առաջատար ընկերություններից մեկը՝ «Արտագրո» ընկերությունը վաղուց արդեն Արարատի մարզի ֆերմերների, ջերմոցատերերի և հողագործների լավագույն բարեկամն է:

Նոր սերնդի բուժանյութերի, որակյալ պարարտանյութերի, սերմերի ներմուծումից, մեծածախ և մանրածախ վաճառքից բացի, ընկերությունը կատարում է գրքերի և բրոշյուրների հրատարակում, ինչպես նաև արժեքավոր խորհրդատվություն՝ դառնալով հողի մշակի վստահելի գործընկերը: Կաթիլային ոռոգման համակարգի ներդրմամբ հեշտանում են հողագործների ոռոգման և պարարտացման հոգսերը:

Առկա սառնարանային տնտեսությունը, որում ներառված են մրգի, բանջարեղենի որակյալ, երկարաժամկետ պահպանումը, մրգի, բանջարեղենի մթերումն ու առաքումը, հնարավորություն է տալիս, որ այգեգործն ու բանջարաբույծը երկար պահպանեն իրենց բերքը: Սակայն դրանք էլ դեռ ամբողջը չեն: «Արտագրոն» կատարում է սրսկիչների և տարբեր նշանակության գյուղատնտեսական մեքենաների, բազմապիսի գյուղատնտեսական գործիքների ներմուծում, մեծածախ և մանրածախ վաճառք:

Տարիների ընթացքում ընկերությունը ձեռք է բերել միջազգային լավագույն գործընկերներ, որոնց հետ արդյունավետ համագործակցությունը ցանկալի պտուղներ է տվել: Այս անգամ էլ «Արտագրոյի» նախաձեռնությամբ Երևանի «Մարիոթ-Արմենիա» հյուրանոցում կազմակերպված շնորհանդեսը նոր գործընկերների հետ համագործակցության մեկնարկի լավագույն վկայությունն էր:

Ողջունելով հյուրերին՝ «Արտագրո» ընկերության տնօրեն Արթուր Կտրակյանը կարևորեց «Յառա» և «Ադամա» ընկերությունների ապրանքատեսականու կիրառումն ու անհրաժեշտությունը Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում: Ունենալով լավագույն որակ և մատչելի գներ՝ այդ ապրանքատեսակները կօգնեն ֆերմերներին՝ առողջ և որակյալ բերք աճեցնել: Նա հավաստեց, որ կատարել են բազմակի փորձարկումներ՝ ստանալով գոհացուցիչ արդյունքներ:

«Յառա» ընկերության ներկայացուցիչ տիկին Ուլլա Սանդելլն առաջին անգամ չէր մեր հանրապետությունում. նա քաջատեղյակ է, թե ինչ է անհրաժեշտ այսօր հողագործությամբ զբաղվողներին: Իզուր չէ, որ նորվեգերեն «յառա»-ն նշանակում է «լավ բերք»: Նրա նպատակն է՝ օգնել հայ ֆերմերներին՝ առողջ բերք ստանալու համար: Ընկերությունը 100 տարվա պատմություն ունի, 150-ից ավելի երկրներում գործում են գրասենյակներ, աշխատում են 250 միլիոն ֆերմերների հետ և ջանում միայն բարձր որակ ապահովել՝ արտադրելով գյուղատնտեսությանն անհրաժեշտ ամենակարևոր պարարտանյութերից մինչև միկրոէլեմենտներ:

Ապա ընկերության ներկայացուցիչ Պետեր Դե Վրիեսը ներկայացրեց իրենց արտադրած պարարտանյութերի առավելությունների, ջերմոցներում և բաց գրունտում դրանց ճիշտ կիրառման կարևորության մասին: Անդրադարձավ նաև բույսերի վրա քիմիական տարրերի ազդեցությանը և հողագործներին հետաքրքրող այլ խնդիրներին:

Շնորհանդես-սեմինարին մասնակցում էին ֆերմերներ, գյուղատնտեսական ոլորտի ներկայացուցիչներ և գործարարներ: Նրանց կողմից հնչեցված հարցերն ուղղված էին ոչ միայն «Յառայի» ներկայացուցչին, այլև՝ մյուս ելույթ ունեցողներին:

«Ադամայի» ներկայացուցիչ Յաիր Ջեքսոնը նշեց, որ շատ է հավանում Հայաստանը և ուրախ է «Արտագրոյի» հետ համագործակցության համար: Թեպետ Ջեքսոնը ծնվել է Անգլիայում, մեծացել Իսրայելում, և այժմ ապրում է Շվեյցարիայում, ուր «Ադաման» վեց ամենախոշոր ագրոքիմիական ընկերություններից մեկն է, ունի 300 միլիարդ ԱՄՆ դոլարի իրացում, ներկայացուցչություններ ունի 120 երկրներում, արտադրում է վիթխարի քանակությամբ բուժանյութեր և գյուղատնտեսության զարգացմանը նպաստող արտադրատեսակներ: Հիմնվելով 1949 թվականին Իսրայելում՝ երկու ընկերությունների միացման միջոցով, «Ադաման» 2000 թվականին սկսել է մշակել նոր ռազմավարություն՝ հանդես գալով նորարարական նախաձեռնություններով:

Ներկաները հետաքրքրությամբ դիտեցին բույսերի պաշտպանության այն բոլոր միջոցները, որոնք ներկայացրեց Յաիր Ջեքսոնը՝ ընդգծելով նաև դրանց կիրառումն ու առավելությունները: Իսկ ամենակարևորը՝ միայն «ԱՐՏԱԳՐՈ» ընկերության հաճախորդների համար, գյուղատնտեսական ոլորտի ֆինանսական ծրագրի շրջանակներում շուտով Հայաստանում, ջերմոցատերերի, հողագործների և ֆերմերային տնտեսությունների ֆինանսավորման նոր սխեմա է գործարկվելու՝ «Հայաստանի գյուղատնտեսության սեկտորի ֆինանսավորում» ծրագրով, որն իրագործում է գերմանահայկական հիմնադրամը՝ գերմանական KfW զարգացման բանկի հետ համատեղ:

«Վերջին 15 տարիների ընթացքում, Հայաստանի ագրովարկավորման շուկան հսկայական ճանապարհ է անցել: Եթե նախկինում հաճախորդները չգիտեին, թե որտեղից կարելի է փոխառու միջոցներ հայթայթել, ապա այժմ նրանք հնարավորություն ունեն ընտրելու իրենց համար առավել նպաստավոր վարկավորման պայմանները, և դա շատ կարևոր է»,- նշեց ծրագրի իրագործմանը տեխնիկական աջակցություն ցուցաբերող շվեյցարական «Business and Finance Consulting» ընկերության գլխավոր տնօրեն Միխայել Քորթենբուշը:

Առաջին անգամ Հայաստանում ֆերմերներին տրվելիք վարկերի հասանելիությունը կկազմակերպվի պարզ ֆինանսավորման սխեմայի միջոցով. յուրաքանչյուր հողագործ կարող է ձեռք բերել ամբողջ մշակության սեզոնի՝ իր համար անհրաժեշտ բուժանյութեր և պարարտանյութեր՝ վարկով, առանց տոկոսադրույքի կամ շատ ցածր տոկոսադրույքով, առանց գույքի գրավադրման և գործնականորեն առանց երաշխավորման: Միակ երաշխավորությունը, տվյալ պարագայում, «Արտագրո» ընկերությունն է և նրա՝ հողագործությամբ զբաղվելու փաստը: Այս սխեման գործարկվելու է «ՖԻՆՔԱ Հայաստան» Ունիվերսալ Վարկային Կազմակերպության և «Արտագրո»-ի մասնակցությամբ՝ ֆերմերային տնտեսությունների համալիր սպասարկման համար: Սպասվում է, որ նման բնույթի համագործակցությունը շահավետ կլինի արժեշղթայի բոլոր մասնակիցների համար: Այսպես՝ ֆերմերները 75000-1500000 դրամի չափով և զրոյական կամ շատ ցածր տոկոսադրույքով վարկեր կկարողանան ստանալ: Վարկի տրամադրման համար սպասարկման վճարը կկազմի 3%, վարկի ժամկետը՝ 6–12 ամիս: Ավելին, վարկավորման պայմանները չեն ենթադրում այցելություն վարկառուի բնակության վայր: Մինչև 750000 դրամ գումարի վարկերը չեն պահանջի երաշխավորագրեր:

«Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի աջակցություն» ծրագիրը նախատեսում է մի շարք դրույթներ, որոնք շահեկանորեն տարբերակում են բանկերի սեփական միջոցների կամ այլ դոնորային ծրագրերի հաշվին ֆինանսավորման պայմաններից: Դրանց թվում են բացառապես տեղական արժույթով՝ ՀՀ դրամով, ֆինանսավորումը, գյուղատնտեսություն վարելու համար անհրաժեշտ բուժանյութեր և պարարտանյութեր ձեռք բերելու հնարավորությունը, վարկերի տևողության՝ սահմանված նվազագույն ժամկետները և պարտադիր արտոնյալ ժամանակաշրջանը:

Ներկաներին հետաքրքրող հարցերին սպառիչ պատասխան տվեց «ՖԻՆՔԱ»-ի վարկատեսակների մշակման ղեկավար Վանիկ Հանեսյանը՝ նշելով, որ այլ մարզերից ևս կարող են գնել «Արտագրոյի» արտադրանքը՝ բանկի հետ համագործակցելով:

Իր հերթին Քորտենբուշը հավաստիացրեց, որ արժեշղթայի օղակներն առավել ամուր կլինեն արդյունավետ համագործակցության շնորհիվ: Նախատեսվում է արտադրողից և իրացնողից բացի, ներառել նաև վերամշակողին: «Բիզնես ընդ ֆինանս քոնսալթինգ» ընկերության գործադիր տնօրենը շնորհակալություն հայտնեց հայ գործընկերներին՝ «Արտագրո» ընկերությանը և բոլոր ֆերմերներին ցանկանալով լավ բերք և հաջող գյուղատնտեսական տարի:

Մանվել Կիրակոսյան

ԱԳՐՈ Լրատու
Մարտ 25 - ապրիլ 5, 2016 թ.
թիվ 7 (2095)

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

... ՈՐՊԵՍԶԻ ԵՐԱԶԱՆՔՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՌՆԱ

Գայանե Զորոյանը մասնագիտությամբ մեխանիկ-ինժեներ է: Գյուղատնտեսական ինստիտուտը կարմիր դիպլոմով ավարտելուց հետո, աշխատանքի է անցնում հայկական գյուղմեքենայացման և էլեկտրաֆիկացիայի գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող: Այնուհետև աշխատում է ոլորտի տարբեր կազմակերպություններում՝ «Ագրոարդ»-ում, «Ագրոսպասարկում»-ում, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում:

Դեռևս 2000թ. սկզբներից հանրապետությունում սկիզբ առավ այգետարածքների հիմնման գործընթացը, որը շարունակվեց նաև հետագա տարիներին: Եվ քանի որ այգիների տնկումը զանգվածային բնույթ էր կրում, Գայանե Զորոյանը որոշեց զբաղվել նաև չրագործությամբ: Սկզբում սկսեց փոքր արտադրությունից, այդ նպատակով բակում ստեղծեց համապատասխան պայմաններ: Ծանոթանալով տարբեր մրգատեսակների չրերի պատրաստման տեխնոլոգիային՝ ավելի մասնագիտացավ և խորացավ չրագործության գաղտնիքների մեջ: Հումքի ստացման նպատակով ամուսնու՝ Գարիկ Զորոյանի հետ Էջմիածնի տարածաշրջանում գնելով 3 հողակտոր (3 հա-ից ավելի հողատարածք)՝ այգի հիմնեցին: Տնկեցին ծիրանենու, դեղձենու, խնձորենու, սալորենու, նշենու և ընկուզենու ծառատեսակներ: Ստացված մրգատեսակները լավագույնն էին չրի պատրաստման համար: Հմտանալով չրագործության մեջ՝ հումքի, հետևաբար նաև՝ այգետարածքների ավելացման խնդիր առաջացավ: Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում գնեցին 2 հա ծիրանի այգի, որը մինչ այդ գրեթե չէր մշակվում: Նորից ծառատունկ, այգիների լրացման աշխատանքներ կատարեցին: Երկարատև ջանքերի արդյունքում՝ այգին վերականգնվեց, ստացվում էր համային հատկանիշներով և ապրանքային տեսքով աչքի ընկնող ծիրան, որից լավագույն չիր էր պատրաստվում: Միակ խոչընդոտող հանգամանքը, տիկին Գայանեի կարծիքով, բնական աղետներն են, հիմնականում՝ կարկտահարությունները, որոնց հետևանքով մշտապես տուժում էր բերքը: Իսկ նոր տեխնոլոգիաների ներդրումը, օրինակ՝ այգիների ցանցապատումը, ֆինանսական լուրջ ներդրումներ է պահանջում, որն առանց պետական աջակցության, հնարավոր չէ իրագործել:

Չրի պատրաստման աշխատանքներին մասնակցում է նաև որդին, ով նույնպես ստացել է գյուղատնտեսական համապատասխան կրթություն և իր գիտելիքներն է ներդնում չրագործության կազմակերպման գործում: «Տարիների փորձը ցույց է տալիս, որ ամենահամեղ չիրը ստացվում է չորացման ավանդական եղանակով: Մենք, իհարկե, միրգը չորացնում ենք արկղերում, ստվերոտ և քամիարվող տարածքներում: Այդպիսով, պահպանվում է մրգերի ոչ միայն վիտամինային կազմը, այլև՝ ապրանքային տեսքը: Ես նույնպես մշակել եմ չրի պատրաստման յուրահատուկ տեխնոլոգիա՝ իմ փորձը միաժամանակ փոխանցելով այլ չրագործների»,- պատմում է տիկին Գայանեն: Չրի պատրաստման գործընթացում շաքարաջուր չեն օգտագործում, իսկ անօդ փաթեթավորման շնորհիվ՝ երկարում է պահպանության ժամկետը: Զևավորումն իրականացվում է տիկին Գայանեի մտահղացումներով:

Ամռան ամիսներին բերքահավաքի աշխատանքներին օգնում են այգետարածքների հարակից գյուղերի բնակիչները: «Բարձրորակ չրերը ցանկալի է արտահանել: Իսկ դրա համար արտաքին կապեր և աջակցողներ են պետք: Այդ դեպքում կարտադրենք այնքան, որքան պահանջվում է»,- հավելում է չրագործը: Նա այսօր էլ մտահոգված է նոր ծրագրերով, և անում է հնարավորը, որպեսզի երազանքն իրականություն դառնա, շենանա հայոց աշխարհը, բարգավաճեն հայ ընտանիքները:

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՀՈՂԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ Է

Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղում կոոպերատիվի ստեղծման հիմնադիր ժողովը կայացել էր դեռևս 2014թ. փետրվարին: Կոոպերատիվի ստեղծման գաղափարը սիրով էր ընդունվել գյուղացիների կողմից, քանի որ գանձակցիները կողմնակից են համատեղ աշխատանքին, խնդիրների միասնական լուծմանն ու համախմբված գործունեությանը: Կոոպերատիվն արդեն ունի 400 անդամ:

«Կոոպերատիվը գյուղացիական տնտեսությունների զարգացման այլընտրանքային ձևերից է: Հիմա սիրով եմ հիշում, թե խորհրդային տարիներին մեր պապերը, ծնողները ինչպես էին հաճույքով և համատեղ աշխատում խորհտնտեսություններում: Այսպես աշխատելը նույնիսկ երջանկություն էր: Դա մարդկային համախմբան մի ձև էր: Կոոպերատիվն էլ համատեղ աշխատանքի ձևերից մեկն է, որն իր տնտեսական կառուցվածքով, էապես տարբերվում է նախկին կոլտնտեսություններից»,- ասում է Գանձակի գյուղապետ Վանիկ Հարությունյանը, ով նույնպես հավանություն տալով կոոպերացիայի ձևավորման գաղափարին՝ առաջիններից էր, որ անդամագրվեց: «Կոոպերացիան անհրաժեշտություն էր, քանի որ մենք չէինք կարող առանձին տնտեսություններ վարել, դա գյուղատնտեսության վարման պասիվ ձևն է, որը չի տանում զարգացման: Մենք հողը մասնատել ենք, մի փայատիրոջը տրվել են փոքրիկ հողակտորներ՝ տարբեր հատվածներից: Այդպիսով, հողի մշակությունը չի կարող լինել արդյունավետ, քանի որ հողի սեփականաշնորհումով փորձեցինք լուծել սոցիալական արդարության խնդիրը: Հող տրվեց գյուղացուն, մանկավարժին, գիտնականին և այլոց, մինչդեռ այն արտադրամիջոց է և ոչ թե՝ սոցիալական արդարության սկզբունք: Մենք մասնատել ենք այդ արտադրամիջոցը: Կոոպերացիան հողերի միավորման, խոշորացման, համատեղ մշակման ուղիներից մեկն է»,- եզրահանգում է պրն. Հարությունյանը: Նրա կարծիքով, հողերի միավորմանը խոչընդոտում են մի շարք պատճառներ, դրանցից մեկն այն է, որ մարդիկ գյուղերում հող են ստացել, սակայն այնտեղ չեն բնակվում և այն թողել են անմշակ: «Ցանկալի կլիներ, որպեսզի որոշակի պատժամիջոցներ կիրառվեին հողը պարապուրդի մատնած սեփականատերերի նկատմամբ: Օրինակ՝ պարտադրվի, որպեսզի չմշակվող հողատարածքի սեփականատերը տուգանք վճարի: Մենք պետք է հասնենք նրան, որ սակավահող մեր երկրում, որտեղ հողը մեր միակ ռեսուրսն է, մի թիզ հողակտոր անգամ չմնա անմշակ, իսկ այդ հնարավորությունը կլուծի կոոպերացիան: Կառավարությունը ճիշտ և ժամանակին քայլ կատարեց՝ աջակցելով կոոպերատիվներին: Ես այն կարծիքին չեմ, որ կոոպերատիվի շնորհիվ բոլոր խնդիրները միանգամից լուծումներ կգտնեն: Սրանք քայլեր են, որոնց նպատակը համախմբվելն է: Առայժմ միավորում ենք մարդկանց, փորձում ենք նրանց գործունեության նույն տիրույթը բերել»,- նշում է պրն Հարությունյանը: Գանձակը տարածաշրջանի այն եզակի գյուղերից է, որտեղ գրեթե ամբողջությամբ մշակվում է հողը: Ուշագրավն այն է, որ մերձավորների կողմից մշակվում են նաև գյուղից բացակայողների հողատարածքները: Գյուղում խնամքով պահպանվել է նախկին մեքենատրակտորային հավաքակայանը, ունեն 27 միավոր գյուղատնտեսական տեխնիկա՝ իրենց սարքավորումներով: Իսկ կոոպերատիվին հատկացվել է 1 հատ ՄՏՅ - 82 մակնիշի անիվավոր տրակտոր, մամլիչ, խոտհնձիչ և այլն: Գրավիչն այն է, որ գյուղատնտեսական ծառայությունների դիմաց կոոպերատիվի անդամի և ոչ անդամի համար չկան տարբերակված գներ, բոլորի համար գյուղտեխնիկայով ծառայությունները կատարվում են մատչելի գներով: «Ստացված տեխնիկայով ծառայություն կատարելով՝ զսպում ենք շուկայական գների կամայական բարձրացումը: Համայնքի ընդհանուր ժողովում որոշել ենք ծառայությունների խելամիտ գները, ինչի արդյունքում էլ ոչ մի հողակտոր անմշակ չի մնում՝բացառությամբ մի փոքր քարքարոտ հատվածի»,- հավելում է գյուղապետը: Նրա համոզմամբ, դրան նպաստեց նաև պետական աջակցության ծրագրի շրջանակներում սերմացուի, պարարտանյութի և դիզվառելիքի հատկացումը: «Այդ խնդիրները լուծվել են: Մենք էլ ձեռք ենք բերում ներկրված գերմանական արտադրության կարտոֆիլի բարձր բերքատու տնկանյութ: Կիրառելով թե՛ ցանքաշրջանառություն, և թե՛ սերմասորտաթարմացում, ստանում եք բարձր բերք: Հողագործությունը նվիրում է պահանջում, պետք է ներդնես աշխատանքդ, որպեսզի հատուցվես բերքով»,- իր խոսքը եզրափակում է գյուղապետը:

«Գանձակի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի ծրագրերից մեկն էլ ավելի քան 3000 մ բարձրության վրա գտնվող ամառային արոտավայրերում անասնապահի տնակի, կենդանիների համար փարախի կառուցումն է: Խոշոր եղջերավոր կենդանիները մսուրային շրջանում պահվում են շուրջ 7 ամիս. գարունն այստեղ ուշ է գալիս, ձմեռը՝ շուտ: Գյուղացիները, անասնակերի ապահովման նպատակով, մեծ ծավալով հողատարածքներ են դնում առվույտի ցանքի տակ: Բարձր կալորիականությամբ անասնակերը զգալիորեն նպաստում է նաև կենդանիների կաթնատվության բարձրացմանը: Իսկ Գեղամա լեռների ալպյան գոտում, որտեղ հարուստ է բուսածածկը, արտադրվում է բարձրորակ, համային հատկանիշներով աչքի ընկնող կաթ: Բնական խոտհարքներից նույնպես ստացվում է բարձրորակ անանսակեր:

Վորլդ Վիժընն միջազգային կազմակերպության աջակցությամբ, գյուղում բացվել է կաթի մթերման կետ, այդպիսով լուծվել է նաև կաթի իրացման խնդիրը: Սակայն կոոպերատիվի անդամներին լրջորեն մտահոգում են կաթի մթերման գների պարբերաբար տատանումները, ինչը, նրանց կարծիքով, խոչընդոտում է մի շարք համատեղ ծրագրերի իրականացմանը: Ֆերմերների համոզմամբ, պետությունը պետք է կանոնակարգի գնագոյացումը՝ կաթի փոշու ներկրումները հասցնելով նվազագույնի, քանի որ իրենց արտադրած բարձր ինքնարժեքով կաթը չի կարող մրցակցել կաթի էժան փոշու հետ:

Չնայած դժվարություններին՝ կոոպերատիվի ձևավորումից հետո, Գանձակում ավելացել և շարունակում է ավելանալ անասնագլխաքանակը: Աշխատանքներ են տարվում նաև տոհմային գործի բարելավման ուղղությամբ, ինչի արդյունքում գյուղում արդեն առկա են բարձր մթերատու կենդանիներ: Արտադրվող կաթի ծավալի ավելացմանը զուգընթաց, առաջ է գալիս նաև ժամանակակից սարքավորումներով հագեցած կաթի վերամշակման արտադրամասի հիմնման անհրաժեշտությունը, որի իրականացման գործընթացում գյուղացին դարձյալ կարևորում է պետական աջակցությունը:

Էջի նյութերը՝ Նելլի Սահակյանի

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԷՏԸ՝ ԸՍՏ ՀԱՍԱԿԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ

Էտի նպատակը՝ պտղատու ծառերի աճեցողության և պտղաբերության նպատակադիր կարգավորումն է, այն պատկանում է պտղատու ծառերի վրա ուժեղ ներգործություն ունեցող ագրոմիջոցառումների թվին: Էտի միջոցով ձևավորում են ծառը, ստեղծում ամուր կմախքով, համահավասար սաղարթով ծառեր, բարելավում օդափոխության և լուսավորության պայմանները, դյուրացնում ծառերի խնամքի և մշակության աշխատանքները: Երիտասարդ ծառերի չափավոր և ճիշտ էտի միջոցով կարելի է արագացնել պտղաբերության անցնելու ժամկետը: Էտն իրականացվում է երկու եղանակով՝ կարճացումով և նոսրացումով, որոնք սովորաբար կատարվում են միասին, ինչպես նաև՝ առանձին-առանձին: Կարճացնելիս հեռացվում է ճյուղի և շվի երկարության որոշ մասը, այն լինում է թույլ, միջին և ուժեղ: Նոսրացնելիս հեռացվում է ճյուղը կամ շիվը, չորացված, թույլ, հիվանդ, սաղարթը խտացնող, մեկը-մյուսին խանգարող, կախ ընկած աճերը: Նոսրացումը կատարվում է թույլ, չափավոր և ուժեղ:

Էտի ժամկետը

Հանգստի շրջանում սննդանյութերի մեծ մասը կուտակվում է բույսի արմատներում, բնի և հիմնական ճյուղերի հիմքի մասերում, հետևաբար, որպեսզի սննդանյուերի կորուստ չլինի, ծառերը էտվում են, երբ բույսերը դեռևս խորը հանգստի շրջանում են:

Սովորաբար էտը կատարվում է վաղ գարնանը, մինչև բողբոջների ուռչելը: Միայն Նոյեմբերյանի, Տավուշի և Մեղրու ենթաշրջաններում կարելի է էտ կատարել նաև՝ ծառերի տերևաթափից 15-20 օր անց, մինչև վաղ գարուն: Առաջին հերթին պետք է էտել ցրտադիմացկուն տեսակները՝ աստիճանաբար անցնելով համեմատաբար թույլ դիմացկունություն ունեցողներին: Դրանք են՝ խնձորենին, սալորենին, տանձենին, բալենին, ՝ ծիրանենին, կեռասենին, սերկևիլենին և դեղձենին: Կիրառվում է ամառային կամ կանաչ էտ, երբ շվերի աճը կազմում է 25-30սմ: Կանաչ էտի նպատակն է՝ կարգավորել ծառերի աճը, նպաստել մեծ թվով աճակալող և պտղաբերող ճյուղերի առաջացմանը: Կանաչ էտի ժամանակ հիմքից պետք է հեռացնել կենտրոնական և կմախքային ճյուղերի ողկույզների մրցակից աճերը, դեպի սաղարթի ներսը գնացող, ինչպես նաև կմախքային ճյուղերի վրա ուղղահայաց աճող ուժեղ շվերը, բնի հիմքից առաջացած մացառներն ու բնի վրայի ճյուղերը:

Երիտասարդ ծառերի էտը

Երիտասարդ հասակում էտի հիմնական խնդիրը՝ ծառերի ձևավորումն է: Ծառերի կյանքի սկզբնական շրջանում ուժեղ էտը, առանձնապես շվերի խորը կարճացումը, նպաստում է աճի ուժեղացմանը, հետաձգում պտղաբերող ճյուղերի առաջացումը և պտղաբերության շրջանի թևակոխումը: Այդ նպատակով երիտասարդ ծառերի էտը, հնարավորության սահմաններում, պետք է կատարել չափավոր կերպով: Ճյուղերի կարճացման հետ՝ կատարել նաև նոսրացում՝ հեռացնելով սաղարթը խտացնող, մեկը-մյուսի աճին խանգարող, սուր անկյան տակ աճող ճյուղերը: Ձևավորման տարիներին հիմնականում կատարել ծերատում և նոսրացում, երբ շվերի աճը հասնում է 40-50 սմ-ի, իսկ մինչև 35-40 սմ աճեր ունեցողները չծերատել: Հայտնի է, որ կորիզավոր պտղատեսակներն առավելապես պտղաբերում են միամյա աճերի վրա, որոնց ուժեղ կարճացումը բացասաբար է անդրադառնում բերքատվության վրա: Այդ նկատառումով հիմնականում պետք է կիրառել նոսրացնող էտ, իսկ 40-45 սմ-ից բարձր աճերը կարճացնել 1/4-1/3-ի չափով: Կմախքային և դրանց վրա ստեղծված մյուս կարգի ճյուղերի էտը կատարել այն հաշվով, որպեսզի պահպանվի կենտրոնական ուղեկցողի իշխող դիրքը, ապահովվի մյուս կարգի ճյուղերի ենթարկվածությունը մեկը մյուսին:

Պտղաբերող ծառերի էտը

Բերքատվության սկզբնական շրջանում, երբ դեռևս ծառերի աճը ուժեղ է, հիմնականում կիրառվում է 40-45 սմ բարձր աճ ունեցող շվերի կարճացում՝ 1/4-1/3-ի չափով, ինչպես նաև նոսրացում: Երբ աճն աստիճանաբար սկսում է թուլանալ՝ հասնելով 30-35 սմ, անհրաժեշտ է շվերի կարճացումը դադարեցնել և կիրառել միայն նոսրացում: Իսկ երբ աճը սկսում է թուլանալ և 15-20 սմ-ից չանցնել, նորից կատարել շվերի և ճյուղերի կարճացում, նպաստելով աճի ուժեղացմանը և նոր պտղաճյուղերի առաջացմանը:

Ինչպես հայտնի է, էտի եղանակը և կիրառման աստիճանը, մեծ չափով կախված են տեսակի և սորտի կենսաբանական առանձնահատկություններից: Այսպես, հանրապետությունում լայն տարածում ունեն դեղձենին և ծիրանենին, որոնք աչքի են ընկնում ճյուղառաջացման մեծ ունակությամբ և ուժեղ աճեցողությամբ: Այս պտղատեսակներից հատկապես դեղձենին լուսասեր և ջերմասեր է, հետևաբար դրա էտը պետք է նպատակամղված լինի լուսային և ջերմային պայմանների կարգավորմանը:

Բների սպիտակեցումը (կրակաթի ջրային լուծույթով

Այդ դեպքում կիրառվում է համեմատաբար ուժեղ նոսրացում, իսկ կարճացումը կատարվում է չափավոր կամ թույլ՝ ելնելով ծառերի առողջական վիճակից:

Հնդավորներն, ըստ ճյուղավորման բնույթի և աճի ու պտղաբերման հատկությունների, բաժանվում են մի քանի խմբի: Առաջին խումբն աչքի է ընկնում ճյուղառաջացման մեծ ունակությամբ և ուժեղ աճով: Այդ սորտերը գլխավորապես պետք է նոսրացնել, ձևավորման շրջանում նաև կարճացնել: Սաղարթը ձևավորելուց հետո, հիմնականում նոսրացնել, իսկ երբ ծառերի աճն սկսում է թուլանալ՝ ուժեղացնել շվերի և ճյուղերի կարճացումը:

Ծառերի եիտաարդացնող էտը

Երկրորդ խումբն օժտված է ճյուղառաջացման միջին ունակությամբ և աճով: Նման սորտերը պետք է չափավոր կարճացնել և նոսրացնել, լրիվ պտղաբերման շրջանում ուժեղացնել կարճացումը՝ աճը վերականգնելու և նոր պտղաճյուղեր առաջացնելու նպատակով: Երրորդ խումբն ունի ճյուղառաջացման միջին ունակություն, համեմատաբար թույլ աճեցողություն: Նման սորտերը պահանջում են միջին նոսրացում և ուժեղ կարճացում:

Պտղաբերման պարբերականությունը, որն ուժեղ արտահայտվում է հնդավորների, մասնավորապես՝ խնձորենու մոտ, թուլացնելու համար պետք է ուժեղ բերքի տարում թույլ էտել, իսկ թույլ բերքի տարում՝ ուժեղ, վեգետատիվ աճն ուժեղացնելու նպատակով:

Մեծահասակ ծառերի էտը

Կապված հասակի հետ՝ ծառերի սաղարթը ձգվում է վեր, մերկանում են կմախքային ճյուղերը, կրճատվում ասիմիլացիոն և պտղաբերող մակերեսը, պտաղբերությունը հիմնականում կենտրոնանում է սաղարթի ծայրամասերում, չորանում են ճյուղերը, թուլանում են ծառի աճն ու բերքատվությունը: Այս դեպքում պահանջվում է երիտասարդացնող էտ, որը լինում է թույլ, չափավոր և ուժեղ: Թույլ էտի ժամանակ կմախքային և կիսակմախքային ճյուղերը պետք է կարճացնել 2-3 տարեկան բնափայտի վրա, նոսրացնել չորացած, հիվանդ և թույլ ճյուղերը, իսկ վնասվածները հեռացնել հիմքից կամ մինչև առողջ մասը:

Չափավոր երիտասարդացնող էտի ժամանակ ճյուղերը կարճացվում են 4-6 տարեկան բնափայտի մոտից: Հատկապես լավ արդյունք է ստացվում, երբ ճյուղերը կարճացվում են վերջին բնականոն աճի /35-40 սմ/ մոտից: Նոսրացումը կատարել այնպես, ինչպես թույլ երիտասարդացնող էտի ժամանակ: Ծառերի երիտասարդացնող էտի ժամանակ պետք է ուժեղացնել այգու հողի մշակության, ոռոգման և պարատացման աշխատանքները, հակառակ պարագայում, այն կհանգեցնի բացասական հետևանքների:

Գագիկ Սանթրոսյան
ՀԱԱՀ գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱԳՐՈ Լրատու
Մարտ 25 - ապրիլ 5, 2016 թ.
թիվ 7 (2095)

ԴԻՄԱՆԿԱՐ

ԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՍԽԱԼՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ

Անչափ գեղեցիկ ու հարթ ճանապարհը մեզ տանում է դեպի Քարահունջի գյուղապետարան: Կանաչ շենք է: Մաքուր աստիճաններով բարձրանում ենք գյուղապետի գրասենյակ, չափազանց խնամված ու լուսավոր սենյակ՝ զարդարված կանաչ, փարթամ բույսերով: Թվում է՝ տաքուկ տուն ես մտել:

Լուսինե Ավետյանը Հայաստանի հարավ-արևելքում գտնվող Քարահունջ գյուղը ղեկավարում է արդեն 14 տարի: Գյուղապետ ընտրվել է 2002թ., 7 թեկնածուներից միակ կինն է եղել: Այդ ժամանակ նա ընդամենը 28 տարեկան էր, ամուսնացած էր և ուներ 3 փոքր երեխա՝ 8 և 6 տարեկան 2 դուստր և մեկամյա որդի: Չնայած դրան՝ Լուսինեին հաջողվել է իր համայնքի կյանքը փոխել դեպի լավը:

Սյունիքի մարզում գտնվող Քարահունջ գյուղն ունի 1376 բնակիչ: Խորհրդային Միության փլուզումից հետո, գյուղի ենթակառուցվածքները երկար տարիներ անբարեկարգ վիճակում են եղել: Արդյունքում գյուղի մանկապարտեզը և դպրոցը գրեթե ավերված էին, չկար խմելու ջրի համակարգ և կոյուղի, ճանապարհներ չկային, գործազրկության մակարդակը բարձր էր, իսկ աղքատության մեջ ապրող շատ գյուղացիներ մտածում էին երկիրը լքելու մասին:

«Իմ առաջին նպատակն էր՝ հնարավորություն տալ մարդկանց ունենալ սեփական եկամուտ»,- պատմում է Լուսինեն: «Երկար ժամանակ գյուղի ավագանին վիճում էր՝ վերանորոգել գյուղի մանկապարտեզի շենքը, թե՞ դպրոցի: Մենք շատ սուղ միջոցներ ունեինք, ինչը բավարար չէր դպրոցի համար, ուստի ընտրեցինք մանկապարտեզը: Արդյունքում նախադպրոցական տարիքի երեխաների համար լուծվեց ցերեկային խնամքի հարցը, իսկ նրանց ծնողները հնարավորություն ստացան աշխատել գյուղատնտեսությունում»,- հպարտորեն շարունակում է Լուսինեն: Այնուամենայնիվ, դպրոցը նույնպես աստիճանաբար վերանորոգվեց: Բացի այդ, գյուղի երիտասարդների ջանքերով մաքրվեց տեղի հին հայկական եկեղեցին, հետո ճանապարհները բարեկարգվեցին, փողոցները լուսավորվեցին, գյուղում կոյուղի անցկացվեց:

Լուսինեն ցույց է տալիս Քարահունջը՝ շուրջբոլորը աղբ: «Ահա թե ինչ տեսք ուներ գյուղը, նախքան աղբահանության կազմակերպումը»,- շարունակում է գյուղապետը: Մինչ նա պատմում էր, էկրանին ձայնը անջատած ֆիլմ էր միացված: «Փոփոխությունների բանալի» ֆիլմը Քարահունջի մասին է, նկարահանվել է ԱՄՆ-ի ՄԶԳ-կողմից ֆինանսավորվող «Քաունթերփարթ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից: Գյուղի բնակիչների բազմաթիվ աշխատանքներ ֆինանսավորել են տարբեր դոնորներ, իսկ գյուղապետարանի կողմից յուրաքանչյուր ծրագրում ներդրվել է ընդհանուր գումարի 20 տոկոսը:

Շվեյցարական ֆինանսավորմամբ Քարահունջում իրականացվող «Անասնապահության զարգացման ծրագրի» աջակցությամբ (ծրագիրն իրականացվում է հայկական «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից) բարելավված անասնաբուժական ծառայությունները մարդկանց խրախուսել են ավելացնել կենդանիների գլխաքանակը, իսկ կենդանիներն էլ ավելի առողջ են: Հիմնվել է կաթի մթերման կետ, որպեսզի գյուղացիները կարողանան առանց երկար ճանապարհ անցնելու՝ իրացնել արտադրանքը: Դեգրադացված արոտավայրերը բարեկարգվել են և ապահովվել ջրով, ինչի արդյունքում բարձրացել է կաթի և մսի որակը: «Մարդիկ սկսել են հավատալ իրենց ուժերին, հավատալ, որ իրենք կարող են գումար վաստակել, որ կարող են լուծել իրենց խնդիրները՝ առանց ինչ-որ մեկի օգնությանը սպասելու»,- հպարտորեն նշում է տիկին Ավետյանը: Այսօր Քարահունջի բնակչության 80 տոկոսն իր ապրուստը վաստակում է անասնապահությամբ: Վերջին 5-6 տարվա ընթացքում գյուղից արտագաղթ չի եղել, ինչը, ի դեպ, լուրջ խնդիր է մնում Հայաստանի մյուս գյուղերի համար:



Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) համայնքի ղեկավարի ամենասիրելի նախագծերից մեկն է: «Այն շատ թափանցիկ և արդյունավետ համակարգ է,- ասում է գյուղապետը: Նախկինում, երբ մարդկանց շրջանում անվստահություն կար, մենք մեր բյուջեի տվյալները կախում էինք պատից: Այսօր յուրաքանչյուր ոք ցանկացած ժամի, առանց գյուղապետարան գալու, տանը նստած, կարող է տեսնել մեր համակարգը»:

2002 թ. ի վեր Լուսինեին հաջողվել է իր համայնքի համար մի շարք խնդիրներ լուծել, ինչպիսիք են՝ ենթակառուցվածքների բարեկարգումը, բնակչության շրջանում գործազրկության հարցը: Այսօր նա ցանկանում է անգլերեն սովորել, որպեսզի կարողանա այդ լեզվով առաջարկ-նախագծեր գրել: Նրա հաջորդ նախագիծն է՝ օգնել կին ֆերմերներին՝ ֆինանսավորում գտնել օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվելու համար: «Մեր գյուղը հատապտուղ և խոտաբույսեր աճեցնելու հսկայական ներուժ ունի»,- ոգևորությամբ նշում է Լուսինեն:

2015թ. Մարդկային զարգացման ազգային զեկույցի համաձայն՝ կին գործիչները կազմում են տեղական խորհուրդների 9, իսկ խորհրդարանի՝ 11 տոկոսը, ցուցանիշ, որ կարող է անհանգստության տեղիք տալ: Լուսինեն «Հայաստանի համայնքների միության» վարչության, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հայկական պատվիրակության անդամ է:

Հայաստանում առաջնորդ կանանց ուղին այնքան էլ հարթ չէ, որքան Քարահունջի գյուղապետարան տանող ճանապարհը: «Կին առաջնորդը սխալվելու իրավունք չունի, մեր սխալները չափազանց արագ են աչքի ընկնում, նույնիսկ երբեմն կարող են նկատողություն անել»,- շեշտում է Լուսինեն: Համայնքի կին ղեկավարն անհանգստանում է մարդկանց համար, իսկ անհանգստությունը ստիպում է նոր լուծումներ փնտրել… Լուծումներ, որոնք կյանքը փոխում են դեպի լավը:

Շվեյցարիայի Համադաշնության զարգացման և համագործակցության գործակալություն (ՇՀԶԳ)

ԿԱՐՄԻՐ ԼՈԲԻ

Կարմիր լոբին, մուգ կարմիր թաղանթ ունի: Ձևը երիկամ է հիշեցնում, որտեղից էլ այն ստանում է իր անունը: Հատկապես հայտնի է Հնդկաստանում, Միացյալ Նահանգների հարավում և Իսպանիայում:

Կարմիր լոբին դիետիկ մանրաթելերի հարուստ աղբյուր է: Առողջապահական Համաշխարհային Կազմակերպությունը (ԱՀԿ) խորհուրդ է տալիս օրական ուտել 20-40 գ դիետիկ մանրաթելեր, իսկ 100 գ չոր կարմիր լոբին պարունակում է 25 գ այս բաղադրիչից: Մանրաթելերը տալիս են հագեցվածության զգացում, կանխարգելում են ուռուցքները, կայունացնում է արյան մեջ շաքարի մակարդակը և օգնում օգանիզմից հանելու թունավոր նյութերը: Հաղորդում է էներգիա, որը աստիճանաբար օգտագործվում է օրգանիզմի կողմից:

Կալորիականությունը ցածր է: Կարմիր լոբին պարունակում է B խմբի վիտամիններ, հատկապես B_6, որը պատասխանատու է նաև դիմադրողականության, մաշկի վիճակի և նյարդային համակարգի ակտիվության համար: Չոր լոբին, մինչև եփելը, պետք է թրջել: Այս դեպքում եփման ընթացքը կրճատվում է, և լոբին ազատվում է մարսողական խնդիրներ առաջացնող նյութերից: Լոբին խորհուրդ է տրվում բուսակերներին՝ որպես սպիտակուցների անգնահատելի աղբյուր: Գիտականորեն ապացուցված է, որ այն պարունակում է ավելի շատ սպիտակուցներ, քան միսը: Կարմիր լոբին B վիտամինների, հատկապես, B_1 վիտամինի հարուստ աղբյուր է, որը գործում է՝ որպես հակադեպրեսանտ և լավացնում է հիշողությունը: Լոբին նաև հարուստ է կալիումով, կալցիումով ու ֆոսֆորով, որոնք լավացնում են արյան շրջանառությունը և ամրացնում ոսկորները: Բացի այդ, լոբին պարունակում է շատ երկաթ, ֆոլաթթու, սելեն և ցինկ: Դրանք կարևոր դեր են կատարում մարսողության և իմունային համակարգերի գործունեության համար և չեզոքացնում ազատ ռադիկալները: Լոբու հատիկներում պարունակվող մանրաթելերը նպաստում են օրգանիզմից ավելորդ խոլեստերինի հեռացմանը, որը դրական է ազդում նաև մեր սրտանոթային համակարգի աշխատանքի վրա: Բացի այդ, կարմիր լոբին հարուստ է իզոֆլավոնով. տարր, որը նվազեցնում է շագանակագեղձի քաղցկեղի վտանգը՝ տղամարդկանց մոտ: Ցածր գլիկեմիկ մակարդակը լոբու հաջորդ մեծ առավելությունն է: Այն նպաստում է արյան մեջ շաքարի կայուն մակարդակի ապահովմանը: Կարմիր լոբու մեջ պարունակվող պիգմենտը կարևոր դեր է կատարում՝ որպես հակաօքսիդանտ:

Կարմիր լոբու օգտակարությունը մարդկությանը հայտնի է եղել շատ վաղուց: Այն օգտագործվում է ոչ միայն բժշկության, այլ նաև դիմահարդարման մեջ: Հայտնի են, որ լոբուց պատրաստված դեմքի դիմակները չափազանց օգտակար են, քանի որ այն ինչպես արդեն նշեցինք հարուստ է վիտամիններով և սննդարար նյութերով: Այն շատ է օգտագործվում հայերի, վրացիների հնդիկների և այլ ժողովուրդների ազգային ուտեստների մեջ: Կիրառում են ինչպես աղցաններում և ապուրներում, այնպես էլ լոբուց առանձին ուտեստներ են պատրաստում: Մինչ օգտագործելը, այն անհրաժեշտ է մանրակրկիտ լվանալ ու եփել, որպեսզի բոլոր թունավոր նյութերը դուրս գան: Այն վնասակար ազդեցություն ունի միայն այն ժամանակ, երբ հում են ուտում: Թունավոր նյութերը չեն հասցնում ոչնչանալ, դրա համար անհրաժեշտ է գոնե 10-15 րոպե եռացնել: Հղի կանանց կամ մինչև 12 տարեկան երեխաներին խորհուրդ չի տրվում օգտագործել կարմիր լոբի ոչ ավել, քան շաբաթական մեկ անգամ: Ծեր մարդկանց նույնպես հակացուցված է լոբի շատ օգտագործել, ովքեր ունեն խնդիրներ թթվայնության, խոցերի, գաստրիտի հետ: Թարմ լոբին կարող է պահպանվել մինչև մի տարի, իհարկե, եթե այն պատշաճ կերպով պահեն: Այն անհրաժեշտ է չորացնել, դրանից հետո պահել ամուր հերմետիկ տոպրակի մեջ և դնել սառնարանում:

Դեռևս հին ժամանակներից են օգտագործել կարմիր լոբին: Օրինակ Հին Հռոմում լոբին օգտագործել են որպես սպիտակեցնող դիմափոշի: Ենթադրվում է, որ նույն ինքը Կլեոպատրան դեմքի դիմակը պատրաստել է տվել հենց կարմիր լոբուց: ՌԴ տարածաշրջանում լոբին ի հայտ է եկել միայն 18-րդ դարում, որտեղ ավելի շատ դեկորատիվ բնույթ է կրել, քան ուտելի, իսկ ավելի ուշ օգտագործվել է սննդի մեջ: Լոբին ունի մոտավորապես 250 տեսակ, որոնցից կիրառելի են միայն 20-ը:

Լիլիթ Գասպարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Սյունիք-Զարգացում» ՀԿ-ի կողմից իրականացվող Համայնքային Զարգացման ծրագրի շրջանակներում, Վայոց ձորի մարզի Գեղափ համայնքում գործող տնկարանային տնտեսությունը մատչելի գներով առաջարկում է բարձրորակ պտղատու տնկիներ (ընկույզ, փանձ, խնձոր, ծիրան, սերկևիլ, դեղձ, սալոր, բալ, կեռաս):

Վերապատրաստված մասնագետների կողմից գնորդներին տրամադրվում է նաև այգու մշակության վերաբերյալ տեղեկատվական նյութեր և խորհրդատվություն:

Դիմել Արամ Հակոբյանին:

Հեռ.՝ 093-46-21-93:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23

Վաճառվում է «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում գտնվող օտարման ենթակա գույքը.

Հ/Հ	Գույքի անվանումը	Թողարկման տարեթիվը	Գնահատված արժեքը 23.02.2016թ դրությամբ /դրամ/	26.04.2016թ.		11.05.2016թ.		26.05.2016թ.		10.06.2016թ.	
				մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ա/մ. «ՈՒԱԶ-33-03» (պ/հ.՝ 829 SL 67)	1990թ.	262500	262500	13125	210000	10500	168000	8400	134400	6720
2	Ա/մ. «ՎԱԶ 21214» (պ/հ.՝ 099 LL 63)	2002թ.	127500	127500	6375	102000	5100	81600	4080	65280	3264

Հ/Հ	Գույքի անվանումը	27.06.2016թ.		12.07.2016թ.		27.07.2016թ.		11.08.2016թ.	
		մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ա/մ. «ՈՒԱԶ-33-03» (պ/հ.՝ 829 SL 67)	107520	5376	86016	4301	68813	3441	55051	2753
2	Ա/մ. «ՎԱԶ 21214» (պ/հ.՝ 099 LL 63)	52224	2612	41780	2089	33424	1672	26740	1337

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով: **Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 12:30-ին**: Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը, յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ, նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդ(ներ)ը չի(չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը, ժամը՝ 17:00 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել (հասցեն՝ ք.Երևան, Դ.Անհաղթի 23).

- աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտքագրման հաշիվն է՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի թիվ 163518001652 դրամային հաշիվը:
- անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում, աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական: Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ: Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ք.Երևան, Դ.Անհաղթի 23) մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը, ժամը՝ 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են՝ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտ(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 09:00-18:00 ընկած ժամանակահատվածում, ք.Երևան, Մամիկոնյանց 39ա հասցեում, 010-20-17-32 հեռախոսահամարով: Նախքան աճուրդի սկսվելը, աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին և յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը: Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց հետո երեսուն րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում, նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ (մեկից ավելի լոտ ձեռքբերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաբարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ), իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում, և տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից, իսկ լոտի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող և ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված լոտի գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը: Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից գրավոր դիմելուց հետո:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք. Երևան, Դ.Անհաղթի 23 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռ. 23-73-00, ինտերնետ URL://www.spm.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձևով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել ***011 23 14 30*** հեռախոսահամարով:

Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ ***«Նոյան Տապան» և «Բռկինիպ»*** գրատներում:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 2016 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթ
1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները

«Հայփոստ»,

«Հայմամուլ»,

«Պրես-Ատտաշե»

կազմակերպությունները

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ.ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 27
ստորագրված է տպագրության 04.04.2016 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա